ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Ընդունված է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին

Հոդված 37. Վարչական տույժ նշանակելու ժամկետները

Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործը կարճելու դեպքում, բայց երբ խախտողի գործողություններում առկա են վարչական իրավախախտման նշաններ, վարչական տույժը կարող է նշանակվել քրեական գործի հարուցումը մերժելու կամ այն կարճելու մասին որոշում կայացվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում:

Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելու օրվանից 3 տարվա ընթացքում:

Եթե վարչական իրավախախտումը հնարավոր չէր հայտնաբերել առանց համապատասխան ստուգումներ կամ դիտարկումներ կատարելու, ապա վարչական տույժը կարող է նշանակվել վարչական իրավախախտումը ստուգմամբ կամ դիտարկմամբ բացահայտելու օրվանից հետո՝ ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

Սույն օրենսգրքի 40.3-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ, 189.16-րդ, 189.19-189.24-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելուց հետո՝ երկու տարվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

6. Սույն օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված հայցադիմումներով համապատասխան վարչական տույժը նշանակվում է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետում:

7. Սույն օրենսգրքի 169.28-րդ և 169.31-րդ հոդվածներով ~~169.28-րդ հոդվածով~~ նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

7. 1. Սույն օրենսգրքի 166. 1-ին հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում:

8. Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժ կարող է նշանակվել Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի՝ իրավախախտման փաստը հաստատող որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում, բացառությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով սահմանված տնտեսավարող սուբյեկտ հանդիսացող ֆիզիկական անձանց կողմից կատարված իրավախախտումների, որոնց դեպքում վարչական տույժը կարող է նշանակվել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում:

9. Հարկային մարմնի իրականացրած հարկային հսկողության արդյունքներով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով արձանագրված վարչական իրավախախտումների դեպքում վարչական տույժը կարող է նշանակվել ստուգման կամ այլ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

10. Հարկային և մաքսային մարմինների կողմից քննվող վարչական իրավախախտումների գործերով եթե վարչական իրավախախտման վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը, կամ վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն այդ ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու դեպքում, կամ նշանակվել է փորձաքննություն, ապա վարչական տույժը կարող է նշանակվել վարչական վարույթին վարչական ակտի հասցեատիրոջ ներկայանալուց, վարչական ակտի հասցեատիրոջը ի հայտ բերելուց կամ փորձաքննության եզրակացությունն

ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելու օրվանից մեկ տարվա ընթացքում:

~~Հոդված 166[1]. Պետական ծառայողների կողմից պաշտոնի բերումով ստացած արժեքավոր նվերները պետությանը չհանձնելը~~

~~Պետական ծառայողների կողմից պետական և ոչ պետական ձեռնարկություններից, հիմնարկներից և կազմակերպություններից, ինչպես նաև արտասահմանյան պետություններից, կազմակերպություններից, ֆիրմաներից պաշտոնի բերումով ստացած արժեքավոր նվերները սահմանված կարգով պետությանը չհանձնելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի լրիվ չափով՝ նվեր ստացված առարկաների բռնագրավմամբ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ տուգանքի նշանակում նվերի արժեքի քառապատիկ չափով:~~

Հոդված 166. 1. Նվերներ ընդունելու կամ հաշվառելու սահմանված կարգը խախտելը

1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կողմից իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով թույլատրելի չհամարվող նվերներ ընդունելը, եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով՝ նվեր ստացված առարկայի բռնագրավմամբ, կամ նվեր ստացված առարկայի բռնագրավման անհնարինության դեպքում՝ տուգանքի նշանակում նվերի՝ ընդունման պահին գործող արժեքի հնգապատիկի չափով:

2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կողմից իր ընտանիքի անդամների կամ իր հետ փոխկապակցված անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված նվերների ստացման մասին դիտավորությամբ չհայտնելը կամ սահմանված կարգի խախտմամբ հայտնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով՝ նվեր ստացված առարկայի բռնագրավմամբ, կամ նվեր ստացված առարկայի բռնագրավման անհնարինության դեպքում՝ տուգանքի նշանակում նվերի՝ ընդունման պահին գործող արժեքի հնգապատիկի չափով:

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված նվերները չհաշվառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով՝ նվեր ստացած առարկայի բռնագրավմամբ, կամ նվեր ստացված առարկայի բռնագրավման անհնարինության դեպքում՝ տուգանքի նշանակում նվերի՝ ընդունման պահին գործող արժեքի եռապատիկի չափով:

4. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված նվերները սահմանված ժամկետների կամ կարգի խախտմամբ հաշվառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև երկուհարյուրհիսնապատիկի չափով՝ նվեր ստացած առարկայի բռնագրավմամբ, կամ նվեր ստացված առարկայի բռնագրավման անհնարինության դեպքում՝ տուգանքի նշանակում նվերի՝ ընդունման պահին գործող արժեքի կրկնապատիկի չափով:

Հոդված 169.31. Շահերի բախման վերաբերյալ կարգավորումները խախտելը

1. Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախման վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

2. Նախքան շահերի բախման հանգամանքների վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությունը ստանալը վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելը կամ որոշում ընդունելը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

3. Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած առաջարկությանն առերևույթ հակասող գործողություն (անգործություն) կատարելը կամ որոշում ընդունելը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկի չափով:

Հոդված 223. Վարչական դատարանները

Վարչական դատարանները քննում են՝

1) սույն օրենսգրքի 41.5, 97.2, 97.3, 147, ~~1661,~~ 172.3 հոդվածներով, 180.1, 182, 183.1, 183.2, 189.2 -189.6, 189.9-189.10, 189.25, 189.26-189.28 հոդվածներով, 198.2 հոդվածի չորրորդ մասով և 206.5, 206.10, 206.11, 206.12, 206.13, 206.16, 206.14 հոդվածներով նախատեսված դեպքերում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) հայցադիմումով.

2) սույն օրենսգրքի 170.5, 189.7, 189.18 հոդվածներով և 198.2 հոդվածի հինգերորդ մասով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով.

3) սույն օրենսգրքի 206.9 հոդվածով նախատեսված դեպքում՝ դատավճռի, վճռի կամ այլ դատական ակտի կատարումն ապահովող պետական մարմնի (պաշտոնատար անձի) հայցադիմումով.

4) սույն օրենսգրքի 206.8 հոդվածով նախատեսված դեպքում՝ մարդու իրավունքների պաշտպանի հայցադիմումով.

5) սույն օրենսգրքի 206.15-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի հայցադիմումով.

5. 1) սույն օրենսգրքի 206.17-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի ղեկավարի (Դատական դեպարտամենտի ղեկավարի) հայցադիմումով.

6) սույն օրենսգրքի 40.1-40.4 և 40.6-40.16 հոդվածներով նախատեսված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական մարմինների (պաշտոնատար անձանց) կամ համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուների կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերի հայցադիմումով:

Հոդված 244.17. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը

1. Սույն օրենսգրքի 166.1-ին, 169.28-րդ, 169.31-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ, 189.16-րդ, 189.19-189.24-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

Հոդված 254. Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը

Վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք), իսկ վարչական դատարանի իրավասությանը վերապահված հարցերով՝

1) սույն օրենսգրքի 40.1, 40.2, 40.4, 40.6-40.9, 40.11, 40.13-40.16 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ իրավասու ընտրական հանձնաժողովը.

2) սույն օրենսգրքի 40.12~~, 1661~~ և 183.1 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը.

3) սույն օրենսգրքի 41.5, 47.14, 172.3, 180.1, 182, 183.2 և 206.16 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ ոստիկանության իրավասու մարմինը.

4) սույն օրենսգրքի 97.2 և 97.3 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն.

5) (կետն ուժը կորցրել է 07.02.12 ՀՕ-2-Ն)

6) սույն օրենսգրքի 189.2 -189.6 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ լեզվի պետական տեսչությունը.

7) սույն օրենսգրքի 147, 189.9, 189.10 և 189.25, 189.26-189.28 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը.

8) սույն օրենսգրքի 198.2 հոդվածի չորրորդ մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործերով՝ հարկային տեսչության կամ աշխատանքի պետական տեսչության մարմինները.

9) սույն օրենսգրքի 206.5 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործերով՝ հարկադիր կատարման ծառայությունը.

10) (կետն ուժը կորցրել է 16.12.16 ՀՕ-8-Ն)

11) սույն օրենսգրքի 206.9 հոդվածով նախատեսված դեպքում՝ դատավճռի, վճռի կամ այլ դատական ակտի կատարումն ապահովող պետական մարմինը (պաշտոնատար անձը).

12) սույն օրենսգրքի 206.10-206.13-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ պրոբացիայի պետական ծառայությունը.

13) սույն օրենսգրքի 206.14-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

Արձանագրություն չի կազմվում սույն օրենսգրքի 170.5, 171.1-171.11, 189.7 հոդվածներով, 198.2 հոդվածի հինգերորդ մասով և 257 հոդվածով նախատեսված դեպքերում:

Սույն օրենսգրքի 40.1-40.4 և 40.6-40.16 հոդվածներով նախատեսված դեպքերում համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները, թեկնածուները կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները,

ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերը հայցադիմում են ներկայացնում անկախ իրավասու ընտրական հանձնաժողովի կողմից համապատասխան արձանագրություն կազմած լինելու կամ չլինելու հանգամանքից: